ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՁԵՎԵՐԻ ՀԵՏ

Լալա Գրիգորյան
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան

Քրեական իրավունքի տեսությունը վնասի միջնորդավորված պատճառմանն անդրադարձել է դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին[1], սակայն իր տեսական, ինչպես նաև գործնական զգալի հետաքրքրության շնորհիվ դրա հետ կապված հարցերը շարունակվում են քննարկվել նաև ժամանակակից իրավաբանական գրականության մեջ:

ՀՀ քրեական օրենսգրքի 38 հոդվածի 2-րդ մասից բխում է, որ հանցագործության միջնորդավորված կատարումը դրսևորվում է հանցանքը այլ՝ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ:

Ն. Վ. Բարանկովը հանցագործության միջնորդավորված կատարում ասելով նկատի ունի դիտավորյալ հանցագործություն կատարելը՝ դիտավորությամբ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր տարիքի, անմեղսունակության կամ քրեական օրենսգրքում նախատեսված այլ հանգամանքների ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության, ինչպես նաև հանցանքը կատարել են անզգուշությամբ[2]:

Պ. Ֆ. Տելնովի կարծիքով, միջնորդավորված կատարում է համարվում անմեղ կամ անզգուշությամբ գործող անձին դիտավորությամբ օգտագործելը հանցագործության օբյեկտիվ կողմն իրականացնելու համար, ընդ որում՝ այդպիսի անձն օգտագործվում է որպես հանցագործության գործիք[3]:

Հանցագործության միջնորդավորված կատարման ժամանակ արարքի հանրային վտանգավորության բարձր աստիճանը պայմանավորված է նաև այն գործոնով, որ օգտագործվում են այլ անձինք, ովքեր ակամա խախտում են օրենքը: Այդ հանգամանքը փաստարկելով՝ Ռ. Ի. Միխեևն առաջարկում է հանցանքը միջնորդավորված ձևով կատարած անձանց քրեական պատասխանատվությունը խստացնել՝ օրենքում որպես ծանրացնող հանգամանք նախատեսելով հանցանքն

---

[1] Տե՛ս, օրինակ, **Трайнин А. Н.** Учение о соучастии. М., 1941, էջեր 121-123, Тельнов П.Ф. Ответственность за соучастие в преступлении. М., 1974, էջ 75:
[2] Տե՛ս **Баранков Н. В.** Посредственное исполнение преступления: Автореф. дисс.... канд. юрид. наук.. СПб., 2001, էջ 7
[3] Տե՛ս **Тельнов П. Ф.** Ответственность за соучастие в преступлении. М.: Юридическая литература, 1974. էջեր 56-80:

անմեղսունակին օգտագործելով կատարելը[1]: Նմանատիպ կարծիք է արտահայտել նաև Դ. Ա. Լունկովը: Վերջինիս կարծիքով՝ վնասի միջնորդավորված պատճառումը միշտ կապված է անմեղ գործող անձի վրա որոշակի ազդեցության և նրա շահերի նկատմամբ ոտնձգության հետ: Ըստ հեղինակի՝ հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում, բացի տվյալ հանցագործության անմիջական օբյեկտից, վնաս է պատճառվում նաև անմեղ գործող անձի՝ օրենքով պաշտպանվող շահերին, ուստի այդպիսի հանցագործության հանրային վտանգավորությունն ավելի բարձր է[2]:

Այդ առումով պետք է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 63 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցանքը կատարելուն հանցավորի համար ակնհայտ հոգեկան հիվանդագին խանգարումներով տառապող կամ հարբած վիճակում գտնվող, ինչպես նաև քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքի չհասած անձանց ներգրավելը: Նշված ծանրացնող հանգամանքը չի ընգրկում հանցագործության միջորդավորված կատարման բոլոր դրսևորումները, որոնք նույնպես ունեն ավելի բարձր հանրային վտանգավորություն, քան միանձնյա կատարված հանցագործությունները: Հանցագործության միջնորդավորված կատարման ընդգծված հանրային վտանգավորությունն արտահայտվում է ոչ միայն նրանում, որ, բացի հանցագործության անմիջական օբյեկտից, խախտվում են նաև որպես գործիք օգտագործվող անձի շահերը, այլև նրանում, որ հանցագործության միջնորդավորված կատարողը բնութագրվում է բարոյականության տեսանկյունից պարսավելի վարքագծով՝ մարդուն իր ձեռքում որպես «կենդանի գործիք» օգտագործելով: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 63 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից հանել «ինչպես նաև քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքի չհասած» բառերը, և նշված մասը լրացնել 5.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «հանցանքն այնպիսի անձանց օգտագործելու միջոցով կատարելը, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության»:

Հանցագործության միջնորդավորված կատարման արտաքին դրսևորումն ունի որոշակի առանձնահատկություն. չի կարող դրսևորվել անգործությամբ, քանի որ այն միշտ ենթադրում է անձի վրա գիտակցված և նպատակաուղղված ներգործություն[3]:

Ըստ Օ. Ցվիրենկոյի՝ հանցագործության միջնորդավորված կատարման օբյեկտիվ կողմը դրսևորվում է նրանում, որ անձը դրդում է անմեղսունակին կամ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձին կամ անմեղ գործող անձին կամ անզգուշությամբ գործող անձին կատարելու հանրորեն վտանգավոր արարք՝ նրանց մեջ հարուցելով համապատասխան արարք կատարելու վճռականություն կամ ամրապնդելով արդեն ծագած վճռականությունը[4]:

Հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում արարքը՝ որպես

---

[1] Տե՛ս **Михеев Р. И.** Уголовно-правовая оценка ООД невменяемых при групповых посягательствах// Актуальные вопросы борьбы с преступностью, Омск. 1983. էջ 19:

[2] Տե՛ս **Луньков Д. А.** Посредственное причинение вреда: уголовно-правовые и криминологические аспекты. Дисс....канд. юрид. наук, Екатеринбург, 2013, էջ 72-76:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 79:

[4] Տե՛ս **Цвиренько О. Л.** Исполнитель преступления как вид соучастника по уголовному праву Российской федерации, Дисс....канд. юрид. наук, Тюмень, 2005, էջ 77-78:

օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, դրսևորվում է յուրովի. միջնորդավորված կատարողը ներգործում է անմիջականորեն վնաս պատճառողի գիտակցության և (կամ) մարմի վրա: Այն բանից հետո, երբ միջնորդավորված կատարողը դադարեցնում է գործիք հանդիսացող անձի նկատմամբ հոգեբանական կամ ֆիզիկական ներգործությունը, կատարվող հանցագործության օբյեկտիվ կողմն իր հետագա արտահայտությունն է ստանում գործիք հանդիսացող անձի արարքում:

Սուբյեկտիվ կողմից հանցագործության միջնորդավորված կատարումը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Ըստ Օ. Ցվիրենկոյի՝ հանցագործության միջնորդավորված կատարման սուբյեկտիվ կողմը դրսևորվում է նրանում, որ անձը գիտակցում է, որ որպես հանցագործության գործիք օգտագործում է այնպիսի անձի, ով օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ գործում է անզգուշությամբ, նախատեսում է դրա հետևանքով հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը կամ անխուսափելիությունը (դիտավորության գիտակցական հատկանիշ) և ցանկանում է այդ հետևանքների առաջացումը (դիտավորության կամային հատկանիշ)[1]:

Հանցագործության միջնորդավորված կատարման հասկացությունը բնորոշելու համար կարևոր է անդրադառնալ միջնորդավորված կատարման հնարավոր դրսևորումներին: Պետք է նշել, որ այս հարցի վերաբերյալ ևս տեսաբանները միասնական կարծիք չունեն:

Օրինակ՝ Ռ. Դ. Սաբիրովը, Պ. Ֆ. Տելնովը, Ի. Սոլոմենկոն, Մ. Ի. Կովալյովը հացագործության միջնորդավորված կատարում են համարում հետևյալ դրսևորումները՝ հանցագործության կատարման ընթացքում անմեղսունակության վիճակում գտնվող և քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձանց օգտագործումը, այլ անձի սխալը օգտագործելը, որը բացառում է վերջինիս քրեական պատասխանատվությունը կամ քրեական պատասխանատվություն է առաջացնում միայն անզգույշ հանցագործության համար, հանցանքի կատարմանը ֆիզիկական կամ հոգեկան բռնության միջոցով ներգրավելը, հրամանի կատարումը[2]:

Իսկ օրինակ՝ Ա. Վ. Շեսլերը, վերլուծելով հանցագործության միջնորդավորված կատարման դրսևորումները, նշում է, որ հանցագործության միջնորդավորված կատարում չեն կարող համարվել անզգուշությամբ գործող անձանց օգտագործումը և այնպիսի անձանց օգտագործումը, ովքեր ինքնուրույն պատասխանատվություն են կրում ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ, ինչպես նաև հրամանի կամ կարգադրության հիման վրա հանցանք կատարելու դեպքում: Ըստ հեղինակի՝ հանցանքի միջնորդավորված կատարումն առկա է միայն այն դեպքում, երբ հանցավորը օգտագործում է այլ անձանց, ովքեր գործում են արաքի հանցավո-

---

[1] Տե՛ս **Цвиренько О. Л.** Исполнитель преступления как вид соучастника по уголовному праву Российской федерации, Дисс....канд. юрид. наук, Тюмень, 2005,, էջ 78:

[2] Տե՛ս, օրինակ, **Ковалев М. И.** Соучастие в преступлении. Ч. 2. Виды соучастников и формы участия в преступной деятельности. Ученые труды. Т. V. Серия Уголовное право. Свердловск. 1962. էջեր 15-30; **Тельнов П. Ф.** Ответственность за соучастие в преступлении. М.: Юридическая литература, 1974. էջ 75; **Сабиров Р. Д.** Виды исполнительства преступления и их квалификация // Проблемы профилактики преступности на современном этапе. Межвузовский сборник научных трудов. Свердловск, 1983. էջեր 40,46; **Соломоненко И.,** Соучастие в исполнении незаконного приказа // Российская юстщщя. 2000. № 5. էջ 40:

ությունը բացառող ցանկացած հանգամանքի պայմաններում[1]: Նմանատիպ կարծիք է արտահայտել նաև Ա. Պ. Կոզլովը: Վերջինիս կարծիքով հանցագործության միջնորդավորված կատարման հասկացության մեջ պետք չէ ներառել անզգուշությամբ գործող անձանց օգտագործումը, քանի որ վնասի անզգույշ պատճառման դեպքում առկա է անմիջական կատարող՝ անզգուշությամբ հանցանք կատարած անձը, ուստի մինույն արարքի նույն հետևանքի դեպքում չի կարող առկա լինել երկրորդ կատարող, նույնիսկ եթե նա գործել է դիտավորությամբ[2]: Ի. Յա. Հեյֆեցն էլ քննարկվող հարցի շուրջ գրել է, որ ազատ կամքով օժտված անձի օգտագործումը միջնորդավորված կատարում կարելի է համարել շատ մեծ վերապահումով[3]:

Վ. Գ. Ուսովի կարծիքով, անզգուշությամբ գործող անձի օգտագործումը չպետք է ներառվի հանցագործության միջնորդավորված կատարման հասկացության մեջ. նման իրավիճակները պետք է դիտարկել հանցավոր գործունեության այլ ձևերի, օրինակ՝ անզգույշ համապատճառման շրջանակներում[4]:

Ն. Ի. Սալնիկովան հանցագործության միջնորդավորված կատարում չի համարում անզգուշությամբ գործող անձի օգտագործումը (հանցագործության կատարման ինքնուրույն ձև), ինչպես նաև հատուկ սուբյեկտի կողմից հատուկ սուբյեկտով հանցագործության կատարումը՝ հատուկ սուբյեկտ չհամարվող անձին օգտագործելով (հատուկ կատարողի հետ հանցակցություն): Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, հանցագործության միջնորդավորված կատարման այդ երկու դրսևորումներն առանձնանում են իրենց յուրահատկությամբ, քանի որ հանցագործության օբյեկտիվ կողմն իրականացնող անձն ունակ է կրելու քրեական պատասխանատվություն, հետևաբար չի կարող դիտվել որպես հանցագործության գործիք[5]:

Ա. Պ. Կոզլովը գրում է. «Մասնագիտական գրականության մեջ բացակայում է հստակությունը նաև այն հարցի շուրջ, թե որ կատեգորիայի անձանց օգտագործումը պետք է համարվի հանցագործության միջնորդավորված կատարում. կարծում ենք, որ միայն այն անձանց օգտագործումը, ովքեր առանձին քրեական պատասխանատվության ենթակա չեն»[6]:

Համամիտ լինելով հեղինակի հետ՝ կարծում ենք, որ հանցագործության միջնորդավորված կատարում չպետք է համարել անզգուշությամբ գործող անձի միջոցով հանցանքի կատարումը, ինչպես նաև հատուկ սուբյեկտ համարվող անձի կողմից հատուկ սուբյեկտի հատկանիշներով չօժտված անձի միջոցով հանցանքի կատարումը: Մեր մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ հանցագործության միջնորդավորված կատարման էությունը մարդուն «կենդանի գործիք» դարձնելն է, ինչը յուրովի է բնութագրում միջնորդավորված կատարողին, մինչդեռ անզգուշությամբ գործող անձին և հատուկ սուբյեկտի կողմից ներգրավված՝ հատուկ սուբյեկտ չհամարվող անձին պետք չէ դիտել որպես կենդանի գործիք, քանի որ նրանց կամքը և գիտակցությունը ամբողջությամբ սահմանափակված չեն, նրանք չեն գործում ա-

---

[1] Տե՛ս **Шеслер А. Б.** Уголовно-правовые средства борьбы с групповой преступностью. Красноярск, 1999. էջ 60-62:

[2] Տե՛ս **Козлов А. П.** Соучастие: традиции и реалность., СПБ.: Издательство «Юридический центр Пресс», 2001, էջեր 96-97:

[3] Տե՛ս **Хейфец И. Я.** Подстрекательство к преступлению. М., 1914. էջ 30:

[4] Տե՛ս **Усов В. Г.** Понятие и ответственность исполнителя преступления. Дисс....канд. юрид. наук. Рязань, 2007, էջ 82:

[5] Տե՛ս **Сальникова Н. И.** Понятие посредственного исполнительства в Уголовном кодексе РФ// Современное право. 2006, N 5. էջեր 51-52:

[6] Տե՛ս **Козлов А. П.**, նշվ. աշխ., էջեր 111-112:

ռարքի հանցավորությունը բացառող հանգամանքներում, հետևաբար՝ ենթակա են քրեական պատասխանատվության: Մեր կարծիքով՝ հանցագործության միջնորդավորված կատարման քրեաիրավական բնութագրի հիմնական առանձնահատկությունը ոչ թե այն է, որ մի անձի դիտավորությունն իրականացվում է այլ անձի կողմից, այլ այն, որ մի անձի կողմից պատճառված վնասի համար քրեական պատասխանատվությունն **ամբողջությամբ** տեղափոխվում է այլ անձի վրա: Հակառակ պարագայում հանցագործության միջնորդավորված կատարում պետք է համարել նաև հանցագործության դրդչությունը, քանի որ այդ դեպքում նույնպես մի անձի դիտավորությունն իրականացվում է այլ անձի կողմից:

Անզգուշությամբ գործող անձի միջոցով դիտավորյալ հանցանքի կատարումը, մեր կարծիքով, ոչ թե հանցագործության միջնորդավորված կատարում է, այլ համապատճառման դրսևորումներից մեկը՝ այսպես կոչված խառը համապատճառում, երբ միևնույն հետևանքը քրական պատասխանատվության ենթակա երկու այնպիսի անձանց արարքների հետևանք է, որոնցից մեկը գործում է դիտավորությամբ, իսկ մյուսը՝ անզգուշությամբ:

Ինչ վերաբերում է հատուկ սուբյեկտի կողմից հատուկ սուբյեկտ չհամարվող անձի ներգրավմանը, ապա, մեր կարծիքով, այն հանցկացության յուրովի դրսևորում է, պարզապես անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի 38 հոդվածի երկրորդ և հինգերորդ մասերում՝ հանցագործության կատարողի և օժանդակողի օրենսդրական բնորոշումների մեջ, ներառել այդ իրավիճակները:

Հանցագործության միջնորդավորված կատարման ամբողջական բնութագիրը տալու համար անհրաժեշտ է պարզել նաև դրա հարաբերակցությունը հանցագործության մասնակիցների բազմակիության այլ ձևերի՝ հանցակցության և համապատճառման հետ:

Հանցակցությունից հանցագործության միջնորդավորված կատարումը տարբերվում է նրանով, որ հանցակցության դեպքում հանցագործության բոլոր մասնակիցները օժտված են հանցագործության սուբյեկտի հատկանիշներով[1] և ենթակա են քրեական պատասխանատվության, իսկ հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում որպես գործիք օգտագործվող անձը կամ օժտված չէ հանցագործության սուբյեկտի հատկանշներով, կամ գործում է արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներում, կամ վնասը պատճառում է առանց մեղքի:

Հանցակցության և հանցագործության միջնորդավորված կատարման սահմանազատմանը դեռևս 20-րդ դարի 70-ականներին անդրադարձել էր Ա. Թովմասյանը, որը գրել էր՝ «Անմեղսունակին կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու համար համապատասխան նվազագույն տարիք չունեցողներին, օրինակ՝ 8, 10, 13 տարեկան երեխաներին հանցագործության կատարման դրդելը չի կարող որակվել իբրև դրդչություն: Այստեղ ինքը՝ դրդիչը փաստորեն հանդես է գալիս իբրև հանցագործություն կատարող, որքանով որ անմեղսունակն ու փոքրահասակ երեխան

[1] Այն, որ հանցակցության քանակական հատկանիշը ենթադրում է հանցագործության սուբյեկտ հանդիսացող առնվազն երկու անձի առկայություն, հաստատվում է ինչպես իրավաբանական գրականության մեջ (Տե՛ս, օրինակ, **Քոթանջյան Գ.** Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից մարդուն առևանգելը //Օրինականություն, № 72, 2012, էջ 46), այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներում (Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի որոշումը ՎԲ-48/08 գործի վերաբերյալ, 28-րդ կետ):

նրա ձեռքում ըստ էության գործիքների դեր են կատարում»[1]:

Համապատճառումն իր հերթին լինում է երեք տեսակի՝ դիտավորյալ, անզգույշ և խառը:

Դիտավորյալ համապատճառում է համարվում քրեական պատասխանատվության ենթակա անձի կողմից անմիջականորեն դիտավորյալ հանցանք կատարելը այնպիսի անձի հետ, ով օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության[2]: Գրականության մեջ դիտավորյալ համապատճառումը անվանվում է նաև խմբային սահմանազանցում[3]:

Հանցագործության միջնորդավորված կատարումը դիտավորյալ համապատճառումից տարբերվում է նրանով, որ միջնորդավորված կատարման դեպքում միջնորդավորված կատարողը անձամբ չի մասնակցում հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացմանը. այն ամբողջությամբ կատարվում է այն անձի կողմից, ով օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության: Իսկ դիտավորյալ համապատճառման դեպքում քրեական պատասխանատվության ենթակա անձը հանցագործության օբեյկտիվ կողմն իրականացնում է այն անձի հետ, ով օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Ելնելով դիտավորյալ համապատճառման նշված բնութագրից՝ չենք կարող համաձայնել Ե. Վ. Բլագովի այն մոտեցմանը, որ միջնորդավորված կատարման դեպքում հանցագործության օբյեկտիվ կողմը կարող է ինչպես ամբողջությամբ իրականացվել որպես գործիք օգտագործվող անձի կողմից, այնպես էլ միջնորդավորված կատարողի և օգտագործվող անձի համատեղ արարքներով[4]: Մեր կարծիքով, հանցագործության միջնորդավորված կատարման համար անհրաժեշտ է, որ հանցագործության օբյեկտիվ կողմն ամբողջությամբ իրականացվի որպես գործիք օգտագործվող անձի կողմից, քանի որ հակառակ դեպքում կբացակայի հանցանքի կատարման միջնորդավորված բնույթը, ինչը քննարկկվող երևույթի բուն էությունն է: Մեր կողմից առավել ընդունելի է Պ. Ֆ. Տելնովի տեսակետը, համաձայն որի՝ հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում բուն ոտնձգությունը կատարվում է ուրիշի ձեռքերով[5]: Ս. Ս. Ավետիսյանը նույնպես գրում է, որ հանցագործության միջնորդավորված կատարման ցանկացած դրսևորման դեպքում իրական կատարողը չի կատարում քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված արարքը[6]:

Այլ կերպ ասած՝ հանցագործության միջնորդավորված կատարման կարևոր հատկանիշներից մեկն այն է, որ հանցագործության օբյեկտիվ կողմը[7] պետք է ամ-

---

[1] Տե՛ս **Թովմասյան Ա. Թ.** Սովետական քրեական իրավունք, ընդհանուր մաս, Եր., 1971, էջ 406:

[2] Տե՛ս **Баранков, Н. В.** Посредственное исполнение преступления: Автореф. дисс.... канд. юрид. наук., СПб., 2001, էջեր 7, 8:

[3] Տե՛ս **Орымбаев Р.** Специальный субъект, Алма-Ата, 1977, էջ 132:

[4] Տե՛ս **Благов Е. В.** Применение уголовного права (теория и практика). СПб., 2004, էջ 207:

[5] Տե՛ս Тельнов П. Ф. Ответственность за соучастие в преступлении. М., 1974, էջեր 75, 76:

[6] Տե՛ս **Аветисян С. С.** К вопросу о посредственном причинении вреда специальным объектам // Право в вооруженных силах. 2004. № 4, էջ 57:

[7] Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանցագործության միջնորդավորված կատարումը տեսականորեն կարող է դրսևորվել նաև միջնորդավորված օժանդակության, դրդչության կամ կազմակերպման ձևով, տվյալ դեպքում «օբյեկտիվ կողմ» հասկացությունն օգտագործում ենք որոշակի վերապահումով՝ դրանում ներառելով ոչ միայն քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված արարքը, այլև հանցագործության օժանդակության, դրդչության և կազակերպման արտաքին դրսևորում հանդիսացող արարքների կատարումը:

բողջությամբ իրականացվի որպես գործիք օգտագործվող անձի կողմից:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ դիտավորյալ համապատճառումն իր հանրային վտանգավորությամբ առանձնանում է հանցանքը միանձյա կատարելու դեպքերից, քանի որ դիտավորյալ համապատճառման դեպքում հանցավորը այլ անձանց հետ համատեղ գործելով՝ զգալիորեն հեշտացնում է հանցանքի կատարումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող օրենսդրությամբ դիտավորյալ համապատճառումը չի ընդգրկվում հանցակցության հասկացությամբ, դիտավորյալ համապատճառման դեպքում անձի քրեական պատասխանատվության անհատականացման հնարավորություն ապահովելու նպատակով առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 5.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «հանցանքն այնպիսի անձանց հետ համատեղ կատարելը, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության»:

Անզգույշ համապատճառումն այն իրավիճակն է, երբ երկու կամ ավելի անձ կատարում են անվտանգության կանոնները խախտող, փոխկապակցված և փոխպայմանավորված արարքներ, որոնք նրանց ընդհանուր վարքագծի մասն են՝ դրանց միջև առկա օբյեկտիվ և սուբյեկտիվ կապի շնորհիվ, և որոնք անզգուշությամբ հանգեցրել են դրանց համար միասնական, քրեական օրենքով նախատեսված հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացմանը[1]:

Անզգույշ համապատճառման և հանցագործության միջնորդավորված կատարման տարբերությունները հանգում են հետևյալին: Նախ՝ անզգույշ համապատճառման դեպքում հանցագործության օբյեկտիվ կողմը իրականացվում է երկու կամ ավելի անձի կողմից համատեղ, ինչը բացակայում է հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում: Երկրորդ՝ անզգույշ համապատճառման դեպքում բացակայում է մի անձի կողմից մյուսին օգտագործելու հանգամանքը, նրանք բոլորն էլ, հավասարապես մասնակցելով արարքի համատեղ կատարմանը, ենթակա են քրեական պատասխանատվության: Եվ երրորդ՝ հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում միջնորդավորված կատարողը գործում է դիտավորությամբ, ինչը բացակայում է անզգույշ համապատճառման դեպքում:

Ինչ վերաբերում է խառը համապատճառմանը, ապա դա այն իրավիճակն է, երբ քրեական պատասխանատվության ենթակա անձը դիտավորյալ հանցանքը կատարում է այլ՝ այնպիսի անձ օգտագործելու միջոցով, ով հանցանքը կատարում է անզգուշությամբ, և դրա համար ենթակա է քրեական պատասխանատվության: Խառը համապատճառման և հանցագործության միջնորդավորված կատարման տարբերությունն այն է, որ առաջինի դեպքում անզգուշությամբ գործող անձը ենթակա է քրեական պատասխանատվության, մինչդեռ որպես գործիք օգտագործվող անձը օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Այսպիսով, հանցագործության միջնորդավորված կատարման հասկացությամբ, դրա հնարավոր դրսևորումների վերլուծությամբ և հանցագործության մասնակիցների բազմակիության այլ ձևերից դրա սահմանազատմամբ կարող ենք առանձնացնել հանցագործության միջնորդավորված կատարման հետևյալ էական հատկանիշները.

1. հանցագործության միջնորդավորված կատարողը օժտված է հանցագործության սուբյեկտի հատկանիշներով,

---

[1] Տե՛ս **Курсаев А. В.** Дифференциация уголовной ответственности за неосторожное сопричинение вреда: автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. -М., 2011, էջ 8:

2. հանցագործության միջնորդավորված կատարողը որպես գործիք օգտագործվող այլ անձին օգտագործելու միջոցով կատարում է դիտավորյալ հանցագործություն,

3. որպես գործիք օգտագործվող անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, որովհետև կամ օժտված չէ հանցագործության սուբյեկտի հատկանիշներով, կամ գործում է արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներում, կամ վնասը պատճառում է առանց մեղքի,

4. հանցագործության միջնորդավորված կատարողը որպես գործիք օգտագործվող անձի նկատմամբ կիրառում է ֆիզիկական կամ հոգեբանական ներգործություն, որը պատճառական կապով կապված է վերջինիս կողմից տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմն ամբողջությամբ կատարելով:

Վերոնշյալ հատկանիշները ընդհանրացնելով՝ առաջարկում ենք հանցագործության միջնորդավորված կատարման հետևյալ բնորոշումը. հանցագործության միջնորդավորված կատարումը տվյալ հանցագործության սուբյեկտի հատկանիշներով օժտված անձի կողմից դիտավորյալ հանցանքի կատարումն է այնպիսի անձի վրա ֆիզիկական և (կամ) հոգեբանական ներգործության միջոցով, ով այդ ներգործության հետևանքով անմիջականորեն և ամբողջությամբ կատարել է քրեական օրենսգրքով նախատեսված արարքը, սակայն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության:

ПОНЯТИЕ ПОСРЕДСТВЕННОГО СОВЕРШЕНИЯ ПРЕСТУПЛЕНИЯ И ЕГО СООТНОШЕНИЕ С ДРУГИМИ ВИДАМИ МНОЖЕСТВЕННОСТИ УЧАСТНИКОВ ПРЕСТУПЛЕНИЯ

Лала Григорян

Аспирант Образовательного комплекса полиции Республики Армения, преподаватель кафедры теории государства и права и конституционного права юридического факультета академии Образовательного комплекса полиции Республики Армения, капитан полиции

В теории уголовного права посредственное совершение преступления стало рассматриваться еще в конце 19-ого века, однако в силу теоретической и практической значимости вопросы, связанные с данной проблемой, продолжают обсуждаться и в современной юридической литературе.

В статье анализируется понятие посредственного совершения преступления, выделяются те существенные признаки данного правового явления, которые позволяют разграничить посредственное совершение преступления от других видов множественности участников преступления: соучастия и сопричинения, рассматриваются возможные проявления посредственного совершения преступления.

По результатам проведенного исследования автор предлагает собственное определение посредственного совершения преступления, а также выдвигает ряд законодательных предложений по совершенствованию соответствующих уголовно-правовых норм.

CONCEPT OF MEDIOCRE COMMITMENT OF CRIME AND ITS CORRELATION WITH OTHER TYPES OF MULTIPLICITY OF ACCOMPLICES

Lala Grigoryan
Postgraduate student of the Educational Complex of the Police of the Republic of Armenia,
Lecturer of the Chair of Theory of State and Law and Constitutional Law at the Faculty of Law of the Academy of the Educational Complex of the RA Police, Police Captain

---

In the theory of criminal law, the mediocre commitment of crime became the subject of consideration in the late 19th century, nevertheless issues related to this problem continue being debated in the modern legal literature owing to their theoretical and practical significance.

The article analyzes the concept of the mediocre commitment of crime, identifies the essential features of the legal phenomenon, which allows to distinguish between the mediocre commitment of crime and other types of multiplicity of accomplices: complicity and co-infliction, considers possible manifestations of the mediocre commitment of crime.

According to the results of the research, the author offers his own definition of mediocre commitment of crime, and puts forward a number of legislative proposals concerning the improvement of corresponding criminal and legal regulations.

Բանալի բառեր – *հանցագործություն, հանցագործության սուբյեկտ, հանցագործության միջնորդավորված կատարում, հանցակիցներ, հանցագործության հատուկ սուբյեկտ, հանցագործության մասնակիցների բազմակիություն, համապատճառում, հանցակցություն*
Ключевые слова: *преступление, субъект преступления, посредственное исполнение преступления, соучастники, специальный субъект преступления, множественность участников преступления, сопричинение, соучастие.*
Key words: *crime, crime committer, mediocre commitment of crime, accomplice, special subject of the crime, multiplicity of accomplices, co-infliction, complicity.*